



Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

(Հայկ. ՍՍՀ ԳԱ հետազոտական և ազգագրուրյան
ինստիտուտի գիտ. աշխատող)

ՄՈՐՈ ԶՈՐՈ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ

Կասկածից վեր է, որ Մորո ձորո վանքի
ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է շատ
ավելի վաղ, քան նրա պատերին պահպան-
ված վիմարձանագրությունները, որոնք բո-
լորն էլ վերաբերում են հուշարձանի՝ վերա-
կառուցումից հետո եկող շրջանին և ընդ-
դրկում մոտ 60—70 տարվա ժամանակամի-
ջոց (12-րդ դարի երկրորդ կեսից մինչև
13-րդ դարի առաջին տասնամյակիները):

Հավանական է ենթադրել, որ 7—8-րդ
դարերում կառուցված վանքը ավերվել ու
մայացել է արաբական տիրապետության
ժամանակաշրջանում և միայն հետագայում,
12-րդ դարի երկրորդ կեսերին, Մահկանա-
բերդի Արծրունիների և Զաքարյանների կող-
մից մի քանի անգամ հիմնովին վերանո-
րոգելով՝ դարձել է այս զավառի հնագույն
ու նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը:

Որոշ հետազոտողներ Մահկանաբերդի
Արծրունիների հնագույն կառուցվածքն այս
շրջանում համարում են Մակարավանքի
այսպես անվանված Հին եկեղեցին, որը
հուշարձանամբրի հնագույն կառուցվածքն
է, թեև շինության թվականը ստույգ որոշ-
ված չէ⁵: Վերջերս հայտնաբերվեցին այս
Հին եկեղեցու և Մակարավանքի Փոքր եկեղե-
ցու արևելյան գլխավոր խորանների կիսա-
կլոր պատերի երկու բնդարձակ արձանա-
գրություններ, որոնք հավաստում են այս
հուշարձանների կառուցման ժամանակամերձ

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1967 թվա-
կանի № 4-ից:

⁵ Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին»,
1954 թ., № 3, էջ 19:

ՎԻՄԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

լինելը (12-րդ դարի վերջերը), քանի որ
նրանց երկուսի շինությունը նպաստավորող-
ների մեջ հիշատակված է միևնույն Ականջ
իշխանությունում: Խսկ ինչպես հայտնի է, Փոքր եկե-
ղեցին, ըստ արևետման դուան ճակատակալի
շինարարական արձանագրության, կառու-
ցել է Մակարավանքի մեղ հայտնի առաջին
առաջնորդ Յոհանէսը Ուսէ (1198) թվակա-
նին⁶:

Խնչպես նշել ենք, Մորո ձորո վանքի պատ-
մության միակ վկաները նրա պատերի վրա
փորագրված հիշատակագրություններն են,
որոնք հասնում են մինչև 13-րդ դարի առա-
ջին կեսերը, որից հետո վանքի հետագա
կյանքի մասին տեղեկություններ չեն պահ-
պանվել: Պետք է ենթադրել, որ շուտով վրա
հասած մոնղոլական ավերիլ արշավանքնե-
րի և գաժան հարկահանության հետևանքով
վանքը վրկվել է ձեռք բերած արտօնություն-
ներից, քայլավել և, կորցնելով իր առաջ-
նակարգ վիճակը Մահկանաբերդ զավառում,
հետագա դարերում շարունակել է իր գոյու-
թյունը իբրև գյուղական սովորական եկե-
ղեցի, որպիսին նրան տեսնում ենք 19-րդ
դարավերջին:

Մորո ձորո վանքի փոխարեն հետագայում
Ամիր Քրդի հետնորդների տիրապետության
ժամանակաշրջանում կառուցվում են նոր
հոգևոր ու մշակութային կենտրոններ և ըն-
դարձակվում հները: Այս տեսակետից ա-

⁶ Այդ նորահայտ վիմարձանագրությունները հրա-
տարակված չեն:

⁷ Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին»,
1954 թ., № 5, էջ 52.

անձնապես բեղմնավոր են աթաքեկ ամիր-պատաւար Սարգս Բ-ի և նրա որդի Խութ-սուրուղյանի իշխանության տարիները (13-րդ արդի երկրորդ կեսերը), երբ ծավալվում է ակարա Առաքելոց, Կիրանց և որդի վա-ական կոմպլեքսների ընդարձակման աշ-տատանքները և կառուցվում ու բարձր գար-ացման է հասնում հոչակավոր Առաքելի իմանագրած Դեղնուտի վանքը⁸:

Անցնենք Մորո ձորո վանքի վիմարձանա-րությունների քննությանը:

ՎԻՄԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ

Մորո ձորո վանքը բավականին հարուստ է վիմական արձանագրություններով: 13 արձանագրություններ էլ անշան բացառությամբ պահպանվել են անվար վի-ակով, բնմերցվում և վերծանվում են հաջողությամբ: Ավելի շատ են տուժել և գգվարությամբ են վերա-անդնվում մեր հավաքածուի № № 1, 5, 9, 11 բնա-քերը, իսկ աթաքեկ Խվանելի ընդարձակ արձանա-րության յոթ բարերից 4-րդի տառաշարքերը ստիպ-ած ենք եղել վերստեղել զատողության ուժով:

Թվագիր ունեցող արձանագրությունները երեքն են՝ № 1, 3, 11, որոնցից հնագույնը Նանայինն է՝ ՌաԶ (1197) տարեթվով: Անթվագիր բնագրերի ժամանակը առաջանական առաջանակը որոշվում է բրանցում հիշատակված պատմական անձերի ժամա-ակարության ամվանելով:

Հուշարձանի հնագույն արձանագրությունները, ան-ուշտ, վրաց Գեորգի Գ թաղավորի և Ամիր Քուրդ Արծրունու շատ կարենու արձանագրություններն են, որոնց հավանական ժամանակը որոշել ենք Գեորգի Դ-ի քահակալության տարիներով (1156—1184 թթ.):

Մորո ձորո վանքի վիմագրությունը մեծ մասամբ նվիրատվական է: բացառություն են կազմում աթաքեկ Խվանելի և իր բրոշ՝ Նանայի արձանագրությունները, որոնք վերաբերվում են վանքի կառուցվածքների շի-ճությանն ու վերանորոգմանը (№ 1, 11), ինչպես նաև վահանայր Գրիգորիսի հիշատակագրությունը՝ վա-նական տնհանությունը ընդարձակելու մասին (№ 10): Հուշարձանի վիմարձանագրություններից Մ. Բար-

խոսպարյանցը նախկինում հրատարակել է միայն երե-բը, մեր հավաքածուի № 2, 3, 8, սակայն նրա վեր-ծանությունները հնացել են բնագրից, թերի են և ունեն զգալի անձառություններ:

Վանքի վիմագրությանը անդրադարձել է նաև Հ. Եղիազարյանը: Իշխանի շրջանի պատմական հուշար-ձանների «Մուղեցուց»-ում թեև հեղինակի նպատակից դուրս է եղել արձանագրությունների՝ ընդօրինակումն ու հրատարակումը, սակայն մի քանի բնագրերի բո-վանդակությունը վերապատմելիս թույլ են տրված որոշ սխալներ ու տարբներցումներ: այսպես, նշվում է, որ վրաց Գեորգի Գ թաղավորը և սպասալարների տոհմի ականավոր զեմքերը «նոր կալվածքներ» և այլ ընծա-ներ են տալիս վանքին, մինչդեռ, ինչպես հայտնի է դառնում այդ արձանագրությունների վերծանությունից (սույն հավաքածուի № № 1, 7, 8, 11), այդտեղ նվիր-ների մասին ոչինչ չի ասված: և դրանք բնագի էլ նվի-րատական ակտեր չեն, ինչպես կարծել է հեղինակը:

Մյուս արձանագրությունները սրանով առաջին ան-գամ են ներկայացվում բանասիրությանը:

Մորո ձորո վանքի վիմագրությունը ուշագրավ է նաև իր հնագրական հատկություններով: տառաձեկերը մեծ մասամբ կանոնավոր բոլորագիծ երկաթագիր են, ավել-ի երկարավուն, սովորական տառակցումներից բացի հանդիպում են միայն այս միշտայրին հատուկ միա-ցումներ (Դ+է, Տ+է, Թ+Ք): Արձանագրությունների մեծ մասում Ա գրի աշ ստեղին ներթեր բարակ գծիկով աղեղ է փորագրված, որը իր տարերեր ձևերով հատուկ է ինչպես նախնագույն, այնպես էլ 10—11-րդ դարերի վիմագրությանը:

Վիմագրությունների լեզուն դրաբար է, բարբառակին, մոտ խոսակցական լեզվին:

Վերծանության մեջ աշխատել ենք բատ ամենայնի հավագատ մնալ բնագրին: Մեր կողմից կատարված բոլոր հավելումները կամ եղելիք ու պակասող հատ-վածների վերականգնումներն առնված են փակածիկորի մեջ, ինչպես այդ բնույնված է վիմագրական հուշար-ձանների գիտական հրատարակություններում: Բնագրե-րի բովանդակությունն ավելի մատչելի գարձնելու նպա-տակով վերծանության մեջ ավելացրել ենք արոնու թյան մի քանի նշաններ:

1. Եկեղեցու արևելյան խաչքանի թաղի կենտրոնական հատվածի վրա,

քանդակագրդ գոտուց մի շարք վերև, 7 տող

- 1 Ի ԹՎ(ԻՆ) Հ(ԱՅՈՅ): ՈԿԲ ԹԱԳԱԼՈՐՈՒԹԵ(Ա)ՆՆ ԳԻԱԼԻՐԳէ, ՄԵՔՐ ՈՐ(ԴԻՔ ԱՄԻՐ-ՍՊԱ)ՍԱԼԱՐ ԵԱՐԳՄԻ: ԱԹԱ(ԲԱ)Կ ԻՒԱՆԵ ԵՒ(ԱՄ)ԻՐ ՍՊԱՍԱԼԱՐ
- 2 ԶԱՔԱՐԵ: Ա.ԹԱ.Ք ԶԵՐԿԻՐՍ ՀԱԼՅ ՑԱՆԱԼԻՐԵՆԱՅ ԵՒ ՇԻՆԵ (ԶԱՔ ԶՎԱՆՔՄ), ՈՐ ՎԱՂՈՒՅ ՀԵՑԷ ԱԼԱՐ(ԵԱ)Կ ԿԱՅՐ ԶԱԿԻՐ(ՈՒ)Թ(ԵԱՄ)ԲՆ ԱՅՑ: ԱՐԴ,
- 3 (ՅՈՐԺԱՄ) ՍԻՐԵԱՅ ԶՆԱ ԱՌ ԵՒ ԱՌ ԻՆՔ ՏԱՐԱԿԻ ԵՒ Զ(ՍՈՒԳ ԵԹՈՂ, ՏՐ) ՏՄԱԼԻ ԵՄ ԱԹԱԲԱԿ ԻՒԱՆԵ ԵՏ(ՈՒ) ՆՈՐՈԴԵԼ ԶՄ
- 4 ԱԾԱԾԻՆՍ Վ(Ա)Ս(Ն) ՑԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԵ(ԱՆ) ԱԼԱԳԻՆ ԵՒ Շ(ԱՀՆԵԱՀԻՆ ԵՒ ԵԴԻ ԼՈՒ)Ծ Ի ՎԵՐԱ ՍՊԱՍԱԼՈՐԱՅ ՍՈՐԱ ԶԱԿԻՐ(ՈՒՐՆ) ՄԵԾԻ ԶԱՏԿԻՆ

⁸ Գ. Սարգսյան, Դեղնուտի վանքը և նրա վիմա-գրությունը, «Էջմիածին», 1953 թ., № 4, էջ 33—43:

- 5 Ա. ԶՃՐԱԳԻՈՒՑԻՆ ԺԱՄՆ ԻՄ ՀԱՐԱՋԱՑԻՆ ԿԱՏԱՐԵ(Լ ՄԻՆՉԵՒ ԳԱԼՈՒ)ՍՏՆ ՎԻՇ ԿԱ-
ՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՑ (Մ)ԵՐՈՅ ԱԿՐՀՆԵՍՑԻՆ,
- 6 ՈՐ ԽԱՓԱՆԵԼ ԶԱՆԱ ՄԵՐ ԱԶԳԻ ՄԵՂԱՑԻ ՊԱՐՏԱԿԱՆ Է ՆՈՐՈ)ԳԵՑԱԿ ՄՐ ԱՆԱ-
ԾԻՆԱ ՑԱՌԱՋՆ(Ո)ՐԴՈՒԹԵ(ԱՆ) ՀԱԼԻՐ
- 7 ԵՒԱԳՐԻ ՀԵԶԻ ԵՒ ԽՈՆԱՐՀԻ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԶԱԱ ԱՌԱՋՆՈՐԴ ՑԱՋԿԵ ՑԱ(Զ)Կ.
ՄԻՆՉԵՒ ՑԱԼԻՑԵԱՆ.

Մանորույրյուն.— Արձանագրությունը փորագրված է եղել արևելյան խաչեկի թաղի կենտրոնական հատվածի 7 քարերի վրա, բնմի ձևավոր զտուց մեկ շարք վերև ներկայումս այդ քարերից իրենց տեղում են առաջին երեքը և վերջին 7-րդը, իսկ միջամասի 3 քարերը պահպակել, ընկել են: Սրանցից երկուառ՝ 5-րդը և 6-րդը, զանգում են բեմի վրա. Նրանց երեսների գրեթե պահպանվել են թիւ թիւ շատ անաղարտ վիճակում, և բովանդակությունը վերականգնվում է ոչ մեծ շանքերով: Այսպիսով, 7 քարերից պահպառմ է միայն մեկը՝ 4-րդը: Բացի դրանից, տեղում պահպանված 3-րդ քարի տողակերպից և վերջին քարի տողակզբի մասերը, մոտ 2-3 տառերի շափով շարդիկ են, գրեթե եղծվել ուստի և նրանց տառաշարքերը դժվար են կապացվում հարկան քարերի համապատասխան տողերի հետ:

Արձանագրության ամբողջությունը վերականգնելու համար անհրաժեշտ էր առանձին հատվածների պահպանված տառաշարքերը իրար մոտեցնել, կատարել հնարավոր նախնական բառանձատում, որը հնարավորություն կտար վերստեղել անհայտացած՝ 4-րդ քարի բնագիրը, ինչպես նաև 3-րդ և 7-րդ քարերի վնասված մասերի առանձին գրեթե և այսպիսով շարադրութական կապ ստեղծել արձանագրության առանձին հատվածների միջև:

Այսպիսով, այս վերականգնումով բանասիրության ուղարկության է ներկայացվում Զաքարյան եղբայրների՝ մինչև այժմ անհայտ երկարաշունչ և ուշագրավ

2. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՆԵԼՅԱՆ ԽԱՉԹԵԿԻ ԹԱՊԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՐ, ՔԱՆԴԱԿԱՎԱՐԻ ԳՈՒՄՈՎ ՎԵՐԻ, 5 ՔԱՐԵՐԻ ՎՐԱ, 5 ՄՈՒ

- 1 ՑԱՆՈՒՆ ԱՅ, ԵԵ ՍԱՍՆԱՑՍ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՑ ԻՄ ՈՐԴԱԿԲՍ ՄՈՐՈՅ
2 ՉՈՐՈՅ ԱՌԱՅՆԻՄ, ԵՒ ՀԱՅՐՄ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԱՅԼ ՄԻԱՅԲԱՆԲՍ ԵՑՈՒՆ
3 ԻՆՉԻ ՏԱՐԻՆ, Բ. ԺԱՄ ԶԼԱՐԴԱՅՑԱՐԻՆ ՇԱԲԱԹՆ ԱԿՐՆ ԵՒ ԶԿԻՐԱԿԵՆ.
4 Զ. ԱՅ ԱԿՐՆ ԻՆՉ, ԱՅ ՇՈՒՇԿԱՆ: ՈՎ ԽԱՓԱՆԵԼ ՄԵՐ ՄԵՂԱՑԻ ՊԱ
5 ԻՇԱԿԱՆ Է. ԵՒ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԿՐՀՆԻՆ ՑԱՅ.

ա. Նվիրատու անունը՝ Սասնայ, Աճառյանի բառարանում (Հա. 7, էջ՝ 400) տեղագրված է նույն անունների շարքի վերջում՝ հիմք ընդունելով Մ. Բարիսուդարյանցի վերձանությունը, առանց նշելու գոնե մոտավոր ժամանակը:

Թեև արձանագրությունն անթվագիր է, սակայն նրա ժամանակը հեշտությամբ կարելի է որոշել Մորո ձորով վանի առաջնորդ Դրիգորիսի վահաճարության արքիներով, որ երեսում է № Ա 10, 13 բնագրերի ծանրի, ինչպես հարատել է 1197 թվից մինչև 1213 թիվը:

արձանագրությունը, որն արծեթավոր տեղեկություններ է հաղորդում այդ տունի կառուցողական գործունեության և հոգևոր կենտրոնների մասին:

Արձանագրության հրատարակմամբ ձևավում է ամբողջապահարակ Զաքարիայի մահվան թվականը՝ ՈԿԲ (1213 թ.):

Վերձանվող բնագիրն իր կառուցվածքով հիշեցնում է Զաքարիա և Խվանի եղբայրների մի այլ նշանավոր արձանագրությունը Հաղարծնի գավթի վրա, որը թիւ անթվագիր, սակայն ստուգապես նույն ժամանակի է: Երկու գեպարմ էլ բնագրի առաջին մասը շարագրում է երկու եղբայրների անունից և պատմում նրանց 20-ամյա ազատագրական արշավանքները հայոց երկիրը «յանաւրէնաց» ազատելու և «վաղահնակ» վանքերը վերանորոգելու մասին: Երկրորդ մասը նվանի անունից է: Այսուել խոսվում է Զաքարիայի մահվան «յորժամ սիրեաց զնա Ած և առ ինք տարաւ...») և նրա հիշատակը հավերժաց նամակին:

Ուշագրավ է վերձանվող արձանագրության վերշարանը, անեների բանաձեկին հնատող մասը. Խվանին Մորո ձորով վանի առաջնորդ է հաստատում «հետ և խոնարդ հայր» նվազին, ըստ որում հաստատում է «յազգէ շազդ, մինչեւ հափառեան»: Որքան մեզ հայտնի է, սա աննախընթաց դեպք է, գոնե վիմական արձանագրություններում, երբ աշխարհիկ իշխանը սահմանում է ժամանակական իրավունք հոգևոր հիմքարիսիացի համար:

2. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՆԵԼՅԱՆ ԽԱՉԹԵԿԻ ԹԱՊԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՐ, ՔԱՆԴԱԿԱՎԱՐԻ ԳՈՒՄՈՎ ՎԵՐԻ, 5 ՔԱՐԵՐԻ ՎՐԱ, 5 ՄՈՒ

մուրեմն այս Սասնան անձնանվան նախնագույն հիշատակությունն է, քանի որ մինչ այս հնագույնը համարված թագնարի Սասնան ավանդված է 1229 թիվում:

բ. 2-րդ և 3-րդ տողերում «միայբանեցա», «միայբանիք» և «վարդապարին» բառերում յ կիսածայնը ավելացրությամբ է զործածված. Թողնում ենք անփոփոխ, քանի որ այս երեսումը պարզում է յ հնչումի ուղղագրության վիճակն այդ դարերում (12-13 դր.): «Զվարդապարին» բառում անդրադարձված է ո հնչու-

իմ փափկացումը, որը կարող էր տեղի ունենալ տեղային խոսվածքների ազգեցությամբ։ Այս բաց 12—13 արհերի վիմագրության մեջ շատ՝ համախ գործածվում «վարդավառ», «վարդարվար» ձևերով։

3. Եկեղեցու արևելյան խաչթենի թաղի լուսիսապահին մասը, քանդակագարդ գոտուց վերև, մի քարի վրա, 9 տող

(Ի): Թ(Վ.Ի.): ԱԿԶ

ԵՄ ՄԽԻԹԱՐԸ ԵՒ ԱՄ

ՈՒՍԻՆ ԻՄ ՄԽԱԲԱՆ

ԵՅԱՔ ԵԿԵՂԵՑՈՅՑ. ԵՒ Ե

ՏՈՒՆ ՄԵԶ ԺԱՄ ԱՌ ԱՆ

ՆԵՆ: Բ., ՄԽՆ ԻՆՉ. :Ա. ՀԱ

ՐԿԵԼՈՒՐԻՆ: ՈՐ ԽԱՓԱՆ

Է ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ(է)

ԳՐԱԾԷ Ի ԽԱԴԻՆ ԱՐԾԱԹԻ:

Մանրուրյան։—Արձանագրությունը փորագրված է նախակուր սրբատաշ քարի վրա, պահպանվել է անեղծ, մնեցքվում և վերծանվում է անսխալ Տարակարծության տեղի և տալիս վերջին տողը, որը ինքնուրույն, անկախ նախագաստիթյուն է։

Այդ շարժի բոլոր տառածեները նորից ստուգելով տեսում են լուսանկարի վրա համոզվեցինք, որ բնագիրը աշցանձակ ճիշճ է արտադրված։ Արդ, ինչ է նշանակում «Գրած է ի խաղին արծաթի»։

Այս արձանագրության միակ հաստարակիչ Մ. Բարսովարյանցը հատվածը կարգացել է «Գրած աղին արծաթափին» («Արցախ»—342), որ ոչ միայն հեռու է նրականից, այլև չի արտահայտում զոնք որեւէ մտավոր իմաստ։

Այս նախագաստիթյունը կարող էր մատնացուց անել ուն արձանագրության ժամանակը, ըստ այդմ էլ հատվածը կիրագմանվեր «զրված է արծաթի խաղի ժամանակ» (ները), ուր «արծաթի խաղը» զրմական գործառությունները է նշանակում։ Սակայն նման նեթագրությունը, որքան էլ հավանական, հանդիպում է 2 տորչ տարիկության։

ա. Արձանագրությունը հենց սկզբից թվագրված է՝ ԱԿԶ (1217 թ.), ուստի անհավանական է, որ նրա նեղինակները անհրաժեշտություն զգային այս ոչ մեծ բնագրի վերջում նորից շեշտելու նվիրատվության ժամանակը, այն էլ առանձին նախագաստությամբ։

բ. Կարելի էր «ի խաղին արծաթի» համարել անհարկ ժամանակի մասին, և թե ներեները դրամական լինենին (դահնական, սպիտակ) և նվիրատուները հարի համարին հատկապես նշելու այդ դրամների տվյալ ժամանակահատվում ունեցած արժենին մասին։

Հարցը բարգանում է նաև նրանով, որ «գրած է ի խաղին արծաթի» կապակցությունը անսովոր է ավյալ ժամանակի համար նաև իր բնականական կառուցվածքով, ստորոգյալն արտահայտված է հարակատար դիրքայով, որ հազվագեց է այս դարերի վիմագրության մեջ։

Ավելի ուշագիր քննելով արձանագրության առաձեները նկատում ենք, որ «խաղին» տառաշարքի մեջ շրագիրը այնքան էլ նման չէ այս բնագրի մյուս դերին և հարավոր է այն կարդալ նաև՝ չ կամ չ։ Զ կարդալու դեպքում քննարկվող նախագաստիթյունը կդառնա՝ «գրած է ի խաղին արծաթի», որ մենք ամենց ավելի հավանական ենք համարում, ենթագրելով, որ փորագրողը կարող էր չ գիրը գծել դիման։

Այսպիսով, արձանագրության հեղինակներն այս տողն ավելացնելով ուզում են ընդգծել որ նույն բնագիրը գրված է նաև վանքի սրբություններից մեկի՝ արծաթի խաչը։

Նվիրատվության և հատուցման գործարքը հավերժական ու անխախտ դարձնելու նպատակով կատարվող նման երկրորդումը անսովոր չէ հայ վիմագրության համար։

4. Եկեղեցու արևելյան խաչթենի թաղի հարավային մասը, քանդակագարդ գոտուց վերև, 2 քարի վրա, 7 տող

1 Ֆ ՅԱՆՈ Ն ԱՅ, ԵՄ ՅՈՎԱՆԻՍ ՄԻԱՅ-ԲԱՆԵ

2 ՅԱՅ ԱՌԱԾՆԻՍ ԵՒ ՀԱՅՐՄ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԱՅ

3 ՄԻԱՅԲԱՆԻ Ս ԵՏՈՒՆ ԻՆՉ: Ե ԺԱՄ ԶԵԿԵ

4 ՂԵՑԻՍ Ի ՆԱԽԱՍԱՐԴԻ: Ա ԶՅՈՎԱՆՈՒ ՏԱԽՆ(ԻՆ)

5 ԵՒ: Թ ԱԿԻՐ ՀԵՏ ԻԿԻՐ: ԱՅԼ: Դ ԻՆՉ ԵՒ: Թ ԱՄ

6 ՈՒՍԻՆՈՅ ԻՄՈՅ: ՈՐ ԽԱՓԱՆԻ ՄԵՐ ՄԵՂԱ

7 ՅՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է: ԿԱՏԱՐԻԶՔՆ ԱԿԻՐՀՆ-Ի(Ն) ՅԱՅՅ:

Մանրուրյան։—Արձանագրության ժամանակը պետք է որոշել Գրիգորիսի առաջնորդության տարիներու (1197—1213 թթ.)։

ա. Յ-րդ տողում «... ետուն ինձ: Ե: Ժամ զեկեղիցիս» ակնհայտ է փորագրով սխալը, զ նախդիրի փոխարեն պետք է լիներ յ: Նույն բառի մեջ առաջին ե-ի դիմաց գրված է ի: Այս գրերի նման շփոթումը, որ շատ համարակի է 11—12 դարերի վիմագրության մեջ, ցույց է տալիս, որ սրանը վազուց արդեն տարբեր հնչուուններ չեն պատկերում, ինչպես այդ դիտվում էր հին գրական հայերենում։

բ. 4-րդ տողում «... Ա: ԶՅՈՎԱՆՈՒ տամնին» տեղի է ունեցել ա: կետում նշանակած սխալը՝ զ նախդիրը անհարկի է գործածված։

գ. Նվիրատուին խոստացած 5 պատարագաժամերից մեկը պետք է կատարվի Ցովանու տոնին, իսկու մնացած չորսը՝ «Հետ իւր», դրանից հետու «Այլ: Դ: Ինձ ևս Բ: ամուսնոյ իմոյ» այստեղ «Ալլ» նշանակում է՝ «նաև», «բայց գրանից», քանի որ պատարագների բանակը արդեն մեկ անգամ ստորաբաժանված է ըստ նրանց կատարման ժամանակի, ուստի այստեղ նոր, ըստ պատ-

կանելիության բաժանումից առաջ գրված է «այլ» շաղկապը:

5. Եկեղեցու արևելյան խաչքանի հարավային մասը, մի դեղնավուն քարի երկու երեսներին, կիսաեղծված, 7 տող

- 1 ԵՄ ԱԲՈՒՂԱՄՄ ԵՒ (ԻՄ)
- 2 ԵՂԲԱՑՐՍ ԳՐԻԳՈՐ Մ(ԻԱ)Յ
- 3 ԲԱՆԵՑԱՔ ԱԾԱԾ(ՆԻ)Ս, ԵՒ
- 4 ՆՈՐԱՑ ԵՑՈՒՆ ԻՆՉ . ԱԿ
- 5 Ր ԺԱՄ(Ի) ՆՈՐ ԿԻՐԱԿԻ(Ն):(Ո)Վ
- 6 ԽԱՓԱՆԼ ԻՄ ՄԵՂ(ԱՅԱՆ)
- 7 ՊԱՐՏԱԿԱՆ (Ե):

Մանորաւրյան.— Արձանագրված քարի աջ անկյունը ամբողջ բարձրությամբ շարդիկ է, որի հետևանքով արձանագրության տողավերքերի գրերը չեն կարդացվում:

ա. 2-րդ և 4-րդ տողերում «միայրանեացք», «նորայ» բառերում յ-ն ավելացրություն է, որ հաճախ է հանդիպում այս դարերի վիմարձանագրություններում:

Թնագիրը չենք ուղղում, քանի որ այդ երեսումը անդրադարձնում է յ կիսածայնի ուղղագրության վիճակը տվյալ ժամանակաշրջանում:

բ. 4-րդ տողում նվիրատուփի տրվելիք պատարագաժամերի բանակը հնարավոր չէ վերականգնել, որովհետև այդ մասը չարգված է:

6. Եկեղեցու հյուսիսային խաչքանի կամարի վրա, ներքուստ, շարունակությունը արսիդի թաղի վրա, 6 տող

- 1 (ԵՄ Ա)ՌԱՆ ՄԻԱՑԲԱՆԵՑԱ ԱԾԱԾ(Ն)ԻՍ: Ի:
- 2 ԴԱՀԵԿԻՌՎ: ՄԻԱԲԱՆՔՍ Ի ԴԱԼԻԹԻ ԵՒ ՑԱ:
- 3 ԿՈԲԱ ՏԱԼԻՆԻՆ, Ա:
- 4 ԺԱՄ ԳՐԵՑԻՆ ԻՆՉ:
- 5 ՈՎ, ԽԱՓէ ԴԱՏ
- 6 Ի ՑԱՅ Հ:

Մանորաւրյան.— ա. Առաջին տողում նվիրատուփ անոնց զժվար է վերականգնելում, տողավերքին շարդված է 2—3 տառատեղ՝ հաշված նաև հավանական ես-ը, այսիսով, պակասում է միայն մի գիր, որ և համարում ենք Ա-ն Ուրեմն անձնանումը վերծանում ենք Առան, որը հազվաբն է հայ իրականության մեջ:

բ. 2-րդ տողում դահեկան բառի վերցնմբեր ան գործական հոլովում շեշտափության հետևանքով հնչումափոխության է ենթարկվել և սղվել (դահեկնով):

Ա կայուն հնչյունի հնչյումափոխությունը կամ սղումը գասական հայերենում չի դիտվում, ուստի այս երեսումը ժողովրդական հնչման ազդեցությունը պիտք է համարել, պայմանով, եթե բացառվի փորագրողի սխալը:

7. Եկեղեցու հյուսիսային խաչքանի թաղի արևմտյան մասը, ձևավոր քիվից վերև, 4 քարի վրա, 5 տող

- 1 ԿԱՄԱԿԻՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ(ԵԱՄ)Բ ԹԱԳԱԿՈՐԻՆ ԳԻԱԼԻՐԴԻ:
- 2 ԵՄ ԱՄՒՐ ՔՈՒՐԴՈ ԱՈՒ ԳԻՐ ԱԶ ԱՏՈՒԹԵ(ԱՆ) Ի ԹԱԳ(ԱԿՈՐԵ):
- 3 ՄԲ ԱԾԱԾՆԻՍ ՄՈՐՈ ԶՈՐ(Ո) ՀԱԻՐՆ ՑՈՎԱՆԻՍԻ ԵՒ ՆԱ ԵՑ ԻՆՉ
- 4 Ի ՏԱՐԻՆ: ԱՌ ՃԱՄ ԶՄԱՌԶԱՐԴԱՐՆ: ՈՎ, ԽԱՓԱՆԼ

ԴԱՏԻ ՑԱՅ:

8. Եկեղեցու հյուսիսային խաչքանի թաղի արևելյան մասը, նախորդի շարունակության վրա, 4 քարի վրա, 6 տող

- 1 ԱՆՈՒԱՄԲ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՄ ԳԻ-ԱԼԻՐԴԻ, ԹԱԳԱՒ:
- 2 ՈՐՈՅ ԹԱԳ(ԱԿՈՐ) ԵՑՈՒ ԶՄՈՐՈ ԶՈ-ՐՈ ՎԱՆԻԳ ՀԱԻՐՆ ՑՈՎԱՆԻՍԻ,
- 3 ԵՒ ԱՐԱՐԻ ԱԶԱՅ ՑԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՐԿԻ, ԱՄՄԻՐ ՔՐԴԻՆ ՀՈԴ
- 4 ՑՈՂՈՒԹ(ԵԱՄ)Բ, ՈՐ ԻՆՉ ԱԴԱԼԻԹՔ ԱՐՆԵՆ, ՈՐ ՄԵՐ ՀՐԱՄԱՆԱՅՅՈՒՄ ՀԱ
- 5 ԿԱՌԱԿ ԻՒՆԻ, Ա/ՍՏՈՒԾՈ)Յ ՀՐԱՄԱՆԻՆ Է ՀԱԿԱՌ: ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՄ

6 ԱՆՈՒԱՄԲԻՆ ԱՅ:

Մանորաւրյան.— Համարյա նույն բովանդակության այս արձանագրությունները Մորո ձորո վանքի հնագույն չիշտակություններն են: Թեև նրանք չեն թվարված, ուսիայն ժամանակը որոշվում է նրանցում հիշտակ-ված անձերի ժամանակագրությամբ: Հայտնի է, որ վրաց Գեորգի Գ թագավորը զանակալի է 1156—1184 թթ: Այս նույն ժամանակներում էր զործում նաև Կայեն և Մահկանաբերդի իշխան Ամիր Քուրդ Արծրունին, Զաքարիայի և Խվանելի մորեկրայքը, աթաքեկ ամիրսպասարար Սաղոն Բ-ի մեծ պապը Ամիր Քուրդը վիթխարի հնդինակություն ուներ վրաց արքունի-թում, որի շնորհիլ Գեորգի Գ-ի ժամանակ հասել էր Թիֆլիսի ամիրապետի բարձր գիրքին:

Վերածնվող բնագրերից հայտնի է պանում, որ Մորո ձորո վանքը 12-րդ դարի երկրորդ կեսին հասնելով բարձր զարգացման, հանդիսանում էր Մահկանաբերդի իշխանների հնագույն ու հնանավոր ու մշակու-թային կենարուններից մեկը:

Այդ է պատճառը, որ Ամիր Քուրդը իր «Հողցողու-թիամբը հատուկ թագավորական արտօնագիր» («գիր պատության») է բերում Գեորգի Գ-ից Մորո ձորո վանքին, որով «Թագավորաց թագաւորք» վանքն աղա-տում է «յամենայն հարկէ» և հանձնում հայ Ցովանիսի առաջնորդությանը:

(Ցարունակելի)